

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

___ օգոստոսի 2008թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՎԱՂ (ՈՉ ԱՎՏՈՄԱՏ) ԱՀԱԶԱՆԳՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Սեյսմիկ պաշտպանության մասին»
ՀՀ օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածներով.

Հրամայում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքներում ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿԱՐԳ
ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱԶԱՐԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՎԱՂ (ՈՉ ԱՎՏՈՄԱՏ) ԱՀԱԶԱՆԳՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ նրանից վտանգավոր հեռավորության վրա գտնվող տարածքում ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգման կարգը:

2. Վաղ ահազանգման հիմնական նպատակը սպասվող ուժեղ երկրաշարժի հնարավոր հետևանքները կանխելու կամ նվազեցնելուն ուղղված կառավարության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընթացիկ սեյսմիկ վտանգին համարժեք (ադեկվատ) նախապես պլանավորված գործողություններն են:

3. Ուժեղ երկրաշարժի վաղ ահազանգումը լինում է երկու տեսակի.

1) Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգում, որն իրականացվում է պետական կառավարման մարմինների միջոցով:

2) Ուժեղ երկրաշարժի վաղ (ավտոմատ) ազդարարում, որն իրականացվում է ավտոմատ կերպով՝ ուժեղ երկրաշարժի շտապ վաղ ազդարարման համակարգի միջոցով:

4. Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգումը կատարվում է՝ հենվելով ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման արդյունքում ուժեղ երկրաշարժի սպառնալիքի հավանականային կանխատեսման վրա:

5. Ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը ենթադրում է տարածաշրջանի սեյսմիկ իրավիճակի ուսումնասիրում սեյսմիկ պաշտպանության տեսակետից: Հայաստանում վաղ (ոչ ավտոմատ) ահազանգման ռազմավարությունը հիմնված է ոչ թե առանձին երկրաշարժի կանխատեսման, այլ ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման վրա:

2. Հիմնական հասկացություններ

6. *Հատուկ իրադրությունը ՍՊԱԾ-ում* ՀՀ տարածքում կամ նրա հարակից տարածքում ուժեղ երկրաշարժի վտանգի սպառնալիքի հայտարարումն է ՍՊԱԾ-ի համակարգում:

7. *Արտակարգ իրավիճակը երկրաշարժի դեպքում* ՀՀ տարածքում կամ նրա հարակից տարածքում ուժեղ երկրաշարժն է, որը հանգեցրել է մարդկային զոհերի, խոշոր նյութական կորուստների եւ ՀՀ տարածքում մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

8. *Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի գոտին* հնարավոր ուժեղ երկրաշարժի 7 և ավելի բալ (MSK-64 սանդղակով) ուժգնությամբ կամ գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման $a = 0,2g$ և ավելի մեծությամբ ազդեցության տարածքն է:

9. *Ուժեղ երկրաշարժի շտապ վաղ ազդարարման համակարգը* հենվում է այն իրողության վրա, որ էլեկրամագնիսական ալիքները շատ անգամ ավելի արագ են տարածվում, քան սեյսմիկ ալիքները, հետևաբար սեյսմիկ սարքերից էլեկտրամագնիսական ալիքները ավելի շուտ են հասնում օբյեկտին, քան երկրաշարժի ավերիչ ալիքները: Ուժեղ երկրաշարժի մասին ազդարարումը կատարվում է ծայնային, լուսային ազդանշանի տեսքով, ինչպես նաև ավտոմատ անջատող սարքերի միջոցով:

10. ՍՊԱԾ-ի Փորձագիտական խորհուրդը Հայաստանի Հանրապետության սեյսմիկ պաշտպանության ոլորտի հանրապետության և արտասահմանյան համապատասխան կազմակերպությունների փորձագետների խումբն է:

2. Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգման ընթացակարգը

11. Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգման համակարգում ՍՊԱԾ-ի կողմից իրականացվող միջոցառումները ներառում են՝ սեյսմիկ ռեժիմի վերլուծությունը, ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը, ուժեղ երկրաշարժի սպառնալիքի հավանականային կանխատեսումը, Փորձագիտական խորհրդում սեյսմիկ իրավիճակի քննարկումը և եզրակացության ներկայացումը:

1) ՀՀ տարածքում սեյսմիկ մոնիտորինգի նպատակով իրականացվող շուրջօրյա բազմապարամետրային դիտարկումների տվյալների վերլուծության արդյունքում պարբերաբար կատարվում է ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատում (ԸՍՎԳ):

Ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատումը ներառում է.

ա. սեյսմիկ ռեժիմի պարամետրերի ուսումնասիրում երկրաշարժերի ազգային կատալոգի վերլուծության հիման վրա.

բ. սեյսմածին անոմալիաների բացահայտում փորձագիտական համակարգերի կիրառմամբ.

գ. չափվող մոնիթորինգային պարամետրերի ընթացիկ անոմալիաների սեյսմիկ իրականացման հավանականության որոշում.

դ. հնարավոր ուժեղ երկրաշարժի տեղի, ուժի և ժամանակի հավանականային գնահատում ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման փորձագիտական համակարգերի կիրառմամբ, արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքի ընթացիկ սեյսմիկ վտանգի համալիր գնահատում.

ե. ուժեղ երկրաշարժի սպառնալիքի դեպքում ԸՍՎԳ արդյունքների մասին համառոտ հաշվետվության պատրաստում, որը ներկայացվում է ՍՊԱԾ-ի Փորձագիտական խորհրդի (ՓԽ) քննարկմանը.

զ. ուժեղ երկրաշարժի սպառնալիքի գոտում դիտարկումների ցանցի համալրում սեյսմիկ մոնիտորինգի շարժական դիտակայաններով, դիտակայաններում չափումների հաճախականության ավելացում:

2) Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի հավանականային կանխատեսումը ներառում է.

ա. հնարավոր ուժեղ երկրաշարժի գոտու, ուժի և ժամանակի հավանականային գնահատումը.

բ. տեսական իզոսեյստերի քարտեզի հիման վրա MSK-64 սանդղակով 7 և ավելի բալ (մեկ բալի կտրվածքով) ուժգնության հնարավոր ուժեղ երկրաշարժի սպառնալիքի գոտու (տարածքի) հավանականային գնահատումը (գոտիներում բնակավայրերի և սեյսմիկ պաշտպանության տեսանկյունից հատուկ, կարևոր նշանակության օբյեկտների և դրանց ցանկի առկայության դեպքում).

3) Փորձագիտական խորհրդում սեյսմիկ իրավիճակի քննարկումը ներառում է.

ա. ուժեղ երկրաշարժի սպառնալիքի հավանականության քննարկումը և համապատասխան եզրակացության ընդունումը ՍՊԱԾ-ի համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայացված նյութերի և տվյալների հիման վրա.

բ. ՓԽ-ը կարող է ԸՍՎԳ ելակետային տվյալները տրամադրել ՀՀ և արտասահմանյան առաջատար մասնագետներին խորհրդատվության համար.

գ. ուժեղ երկրաշարժի սպառնալիքի դեպքում ՓԽ-ը որոշում է ընդունում ԸՍՎԳ հավաստիության և սպասվող ուժեղ երկրաշարժի հավանականության աստիճանի վերաբերյալ: ՍՊԱԾ-ի պետը հայտարարում է Հատուկ իրադրություն ՍՊԱԾ-ում.

դ. ՓԽ-ի եզրակացությունը ուժեղ երկրաշարժի սպառնալիքի բարձր հավանականության դեպքում գրավոր ներկայացվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին:

12 Ուժեղ երկրաշարժի կամ նրա սպառնալիքի դեպքում ՓԽ-ի որոշմամբ կատարվում է սեյսմիկ ռիսկի օպերատիվ վերագնահատում:

ա. հնարավոր էական հետևանքների՝ զոհերի քանակի և մարդկանց առողջության կորուստների, նյութական կորուստների, վտանգավոր երկրաբանական երևույթների և տեխնածին վթարների, կենսաապահովման մագիստրալային գծերի վնասվածքների հավանականային գնահատումը:

բ. Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի դեպքում ՍՊԱԾ-ի կողմից կատարվում են նաև հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝ հնարավոր ուժեղ երկրաշարժի գոտում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության տվյալների վերլուծություն՝ սեյսմակայունության առումով առավել խոցելի կառույցների բացահայտման նպատակով. հնարավոր ուժեղ երկրաշարժի գոտում աշխատանք բնակչության հետ՝ խուճապի կանխման նպատակով:

13. Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգումը ներառում է.

1) ՍՊԱԾ-ի Փորձագիտական Խորհրդի եզրակացությունը՝ ուժեղ երկրաշարժի սպառնալիքի բարձր հավանականության դեպքում, գրավոր ներկայացվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին: ՍՊԱԾ-ում իրականացվում են համապատասխան գործողություններ համաձայն ՍՊԱԾ-ի պետի կողմից 06.12.2006թ. հաստատված «Օպերատիվ հերթապահության կանոնակարգի»:

2) Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի մասին ՍՊԱԾ-ի Փորձագիտական Խորհրդի եզրակացությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի կողմից հաստատվելու դեպքում ներկայացվում է ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողովի նախագահին, ՀՀ վարչապետին և ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարին:

ա. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը առաջարկում է հրավիրել կառավարության արտահերթ նիստ, որտեղ քննարկվում և հայտարարվում է արտակարգ իրավիճակ ՀՀ տարածքում կամ նրա մի մասում:

բ. կատարվում է ՀՀ կառավարության, պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների «Արտակարգ իրավիճակների դեպքում գործողությունների պլանների» ճշգրտում, միջոցների վերագնահատում և նախապատրաստում, նյութական ռեսուրսների և պահուստի վերագնահատում:

14. Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վերացման վերաբերյալ ՍՊԱԾ-ի ՓԽ-ի հիմնավորված եզրակացության հիման վրա, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը առաջարկություն է ներկայացնում ՀՀ կառավարություն արտակարգ իրավիճակի սպառնալիքի ավարտի վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՎԱՂ (ՈՉ ԱՎՏՈՄԱՏ) ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄՔ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻ ՇԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՎԱՂ (ՈՉ ԱՎՏՈՄԱՏ) ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՎԱՂ (ՈՉ ԱՎՏՈՄԱՏ) ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուժեղ երկրաշարժի սպառնալիքի վաղ (ոչ ավտոմատ) ահազանգման կարգի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածներից:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՍՊԱԾ-Ի ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ (ՈՉ ԱՎՏՈՄԱՏ) ԱՀԱԶԱՆԳՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

1. Առաջադրված խնդիրները լուծելու համար ՍՊԱԾ-ում առկա են.

1) Ազգային մոնիթորինգային դիտացանց, որը կազմված է մոտ 150 ստացիոնար կայաններից, որոնք տեղակայված են ՀՀ և ԼՂՀ տարածքում և որտեղ չափվում են մոտ 40 տարբեր բնույթի մոնիթորինգային պարամետրեր.

2) Երկարամյա տվյալների բազան և գիտելիքների բազան, որը ներառում է նաև տարածաշրջանի ուժեղ և տեղական զգալի երկրաշարժերի հետհայաց վերլուծության արդյունքները.

3) սեյսմիկ վտանգի գնահատման համալիր կենտրոնը (Երևան-Դավիթաշեն), որտեղ կատարվում է դիտակայաններից ամեն օր ստացվող տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.

4) ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման՝ ՍՊԱԾ-ում ստեղծված բազմապարամետրային փորձագիտական համակարգը: Seishelp համակարգչային ծրագրով կատարվում է մոնիտորինգային տվյալների նախնական մշակում և վերլուծություն: DF ծրագրի կիրառմամբ կատարվում է սեյսմածին անոմալիաների անջատում: Expert համակարգի կիրառման արդյունքում որոշվում է ՀՀ տարածքում ընթացիկ սեյսմիկ վտանգի գոտին, արժեքը և վտանգի ժամանակի միջակայքը.

5) ՍՊԱԾ-ում գործող «Օպերատիվ հերթապահության կանոնակարգը», որում ձևակերպված են «Արտակարգ իրավիճակ» և «Հատուկ իրադրություն» հասկացությունները, այդ դեպքերում իրականացվելիք անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները.

6) տարածաշրջանային ուժեղ և տեղական զգալի երկրաշարժերի կանխատեսման որոշակի փորձ ունեցող մասնագետների առկայությունը :

ՆԱխԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նախագիծը մշակել են «ՍՊԱԾ» գործակալության հետևյալ աշխատակիցները. Ա.Անտոնյանը, Հ.Պետրոսյանը, Մ.Ենանովը և Ռ.Բաղդասարյանը: